



Երկիրը Արեգակնային դրուժեան այն մուր-րակն է, որ բնակուած է մարդու կողմէ: Ան եր-րորդն է Փայլածուէն եւ Արուսեակէն ետք: Գրե-թէ գնդածէ է: Տրամագիծն է 12.713 քմ. մէկ բե-ւեռն միւսը եւ 12.756 քմ. հասարակածին վրայ:

Երկրին կազմութիւնը

4.5 միլիառ տարիներ առաջ, արեգակնային նախնական միգամածի փոքրիկ մէկ մասը հետզհետէ խտանալով կազմած է Երկիրը:

Երկրին կառուցուածքը

Երկրին կառուցուածքը կրնանք նմանցնել սոխի կեղեւներուն:

Ունի համակերպոն երեք խաւեր:

1.- Երկրային կեղեւը, որ 33 քմ. թանձ-րութիւն ունի ցամաքամասերու տակ եւ 6 քմ. ովկիանոսներու տակ:

2.- «Մակմայի վերարկու»ն 2900 քմ. թանձ-րութեամբ, որուն տակ ջերմաստիճանը (2000° աստիճան սիլիսիոսէ աւելի է եւ ճնշումը այնքան բարձր է, որ նիւթը հաստատուն եւ հեղուկ վի-ճակներու միջեւ կը գտնուի:

3.- Կեղրոնական կորիզը, բաղկացած է հոսա-նուտ նիւթէ, որ ունի 3400 քմ.ի շառաւիղ մը եւ որուն 2150 քմ.-ը հեղուկ է:

ԵՐԿԻՐ ՄՈՆՈՐԱԿԸ



Մթնոլորտ

Երկիրը պարուրուած է «կազային ծածկոց»ի մը մէջ, որ կը կոչուի մթնոլորտ: Հազար քմ. հաստութեամբ այդ ծածկոցը յատկապէս կազմուած է բորոկածինէ եւ թըթ-ուածինէ: Առանց մթնոլորտին, Արեւէն ածխացած պի-տի ըլլայինք օրուան մը ընթացքին եւ տառացիօրէն սառած՝ գիշերը: Մթնոլորտը ունի առնուազն չորս խաւեր՝ թրոփոսֆերը, որ ծովի մակերե-սէն մօտաւորապէս 11 քմ. բարձր է, որ կը տնօ-րինէ օդերելութեաբանական երեւոյթները, այսինքն անձրեւը, պայծառ օդը, եւայլն: Մթնոլորտը իր մէջէն դէպի եր-կիր անցընել կու տայ արեւուն այն ճա-ռագայթները միայն, որոնք մեզ կը լու-սաւորեն եւ կը տաքցնեն: Ան կը ներծը-ծէ անդրմանիշակագոյն ճառագայթ-ները, որոնք կը վտանգեն մեր կեան-քը: Եթէ այս վերջին ճառագայթնե-րէն մաս մը յաջողի ներթափան-ցել վերջին խաւերէն, ապա գա-նոնք կը կասեցնէ օգոնի խաւը՝ շուրջ 50 քմ. բարձրութեան վրայ:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՃ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՒՇԵԱՆ

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ԱՇԽԱՐՅԵՆ




Գրիչները շինուած և ստարաններ

Ընդհանրապես գրիչները կը ծառայեն գրելու: Սակայն գիտե՞ք որ անոնք երբեմն կրնան երկրորդ կեանք մը ունենալ: Այս ձեռով «Պիք» ընկերութիւնը արտադրած է նոր չոր մելանով գրիչներու տեսակ մը՝ Ուպիքուիթի: Գործածուած գրիչները կը վերամշակուին եւ անոնցմէ կը շինուին նրստարաններ, «փիքնիք»ի սեղաններ եւ աթոռներ:

37 աստիճան

Կը նախատեսուի, որ 2020 թուականին Ճափոնի մայրաքաղաք Թոքիոյ մէջ ջերմաստիճանը շուրջին պիտի հասնի 37-ի: Ասիկա մեծ հարց կըրնայ յառաջացնել: Այդ տարի քաղաքը պիտի ընդունի ողորմական խաղերը: Օդը շատ տաք պիտի ընէ եւ հետեւաբար, մարզիկները պիտի չկարենան լաւ պայմաններու տակ մրցիլ:

Հետեւաբար պետութիւնը կը փորձէ լուծումներ գտնել քաղաքին ջերմաստիճանը իջեցնելու համար: Այս պատճառով 13 Օգոստոսին քաղաքին մէջ ջրեցին մայթերը եւ ատոր շնորհիւ ջերմաստիճանը քանի մը աստիճան նուազեցաւ: Սակայն արդեօք 2020-ի ամառը ատիկա բաւարար պիտի ըլլա՞յ:



3200 տարուան պանիր

3200 տարուան հնութիւն ունեցող պանիրի կտոր մը գտնուած է Եգիպտոսի հին մայրաքաղաք Մեմֆիսի գերեզմաններէն մէկուն մէջ: Հին Եգիպտոսի մէջ մեռելներուն հետ յաճախ ուտելիք կը թաղէին անոնց դէպի անդի աշխարհ ճամբորդութեան համար:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ութ պատառաքաղները:

Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող տասը տարբերութիւնները:


Կենդանիներն ալ աչք խփուկ կը խաղան: Գունաւորէ անոնց պատկերը նախասիրած գոյներովդ:

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԲԱԿԼԱՆ

Մայրիկը փոխանակ ուրախանալու, կը տրտմի ու կ'ըսէ.

- Արա՛մ, այդ հսկան վտանգաւոր մէկը կը թուի: Խնդրե՛մ, անգամ մըն ալ մի՛ երթար հոն. եթէ քեզ բռնէ, գիտե՛ս ինչ կ'ընէ, հում-հում կ'ուտէ:

Բայց Արամ այնքան շատ կը սիրէր արկածախնդրութիւնը, որ յաջորդ օրն իսկ կրկին ծառ կը մագլցի ու կը հասնի դղեակ:



- Բարի լո՛յս, մայրի՛կ,- կ'ըսէ ժպտալով, ու տակաւին խօսքը չաւարտած՝ «Թրիք, թրաք, թրիք, թրաք...»,- կը լսուին հսկային ահռելի ոտնաձայները:

Արամ անմիջապէս կը պահուըտի կրակարանին մէջ:

Ու ներս կը մտնէ հսկան, այս անգամ ոսկի նուագարան մը ձեռքին: Կը դնէ զայն սեղանին վրայ ու կը հրամայէ անոր, որ նուագէ: Այնքան անուշ, այնքան քնքուշ կը նուագէ ան, որ հսկային քունը կը բերէ ու խոր-խոր կը քնացնէ:

Արամ առիթն օգտուելով կը խլէ ոսկի քնարը ու կը փախչի:

Հագիւ դրան մօտեցած՝ քնարը կը կանչէ.

«Կը գողցուի՛մ, կը գողցուի՛մ»:

Հսկան կատաղօրէն կ'արթննայ, աչքերը խոշոր-խաշոր կը բանայ ու դրան առջեւ Արամը տեսնելով կը գոռայ.

- Վա՛յ, անպիտա՛ն, ո՞ր կը տանիս քնարս: Հիմա քեզ պիտի բզբտեմ, հում-հում պիտի ուտեմ.- կը գոռայ ու կը վագէ Արամին ետեւէն:

Արամ անմիջապէս կը փաթթուի ծառի ճիւղերուն ու արագ կը սահի վար:

Արամ կը սահի, հսկան ալ ետեւէն:

Ծառը կը տատանի անոնց շարժումներէն:

- Մայրի՛կ, կացինը բեր.- կը գոչէ Արամ: Մայրիկը հեռուն կը լսէ Արամին ձայնը ու կը շտապէ օգնութեան:

Արամ հագիւ ոտքը գետին դրած՝ կ'առնէ կացինը, կը կտրէ ծառին կոճղը ու... «Թրա՛ք», ծառն ու հսկան կը գլտորին վար:

Մարդակեր հսկան կը մեռնի: Մայրիկը ուրախութենէն կու լայ: Արամ կը փաթթուի մայրիկին, ներողութիւն կը խնդրէ անկէ ու կը խոստանայ անգամ մըն ալ չնեղացնել զինք:

Ու կը փութայ դղեակ:

Դղեակը տապալած էր գետին ու պառաւը վիրաւորուած կը տքար: Յանկարծ կը գոչէ.

- Մայրի՛կ, պառա՛ւը:

Արամ անմիջապէս դուրս կը հանէ զինք դղեակէն, տուն կը տանի, կը խնամէ անոր վէրքը ու կը խնդրէ անկէ, որ

այլեւս ապրի իրենց հետ:


Պառաւը կ'ընդունի անոր առաջարկը ու բոլորը մէկ կ'ապրին միատեղ ուրախ ու երջանիկ:

Հաւիկը ամէն օր իրենց կ'ածէ ոսկի հաւկիթ մը, զոր Արամ կը նուիրէ գիւղի երեխաներուն:


Ոսկի քնարը կը շարունակէ նուագել իր անուշ մեղեդիները:

Իսկ Արամ ոսկիներով կը գնէ ընդարձակ արտ մը, ուր ցորեն կը ցանէ եւ օրն ի բուն աշխատելով զայն կը վերածէ բարեբեր հողի, որմէ կ'օգտուին ե՛ւ իրենք, ե՛ւ գիւղի բոլոր բնակիչները:

(Վերջ)



ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



Ո՞վ ունի կանաչ մատներ

«Կանաչ մատներ ունի» կ'ըսեն այն անձին համար, որ կը յաջողի ամեն ինչ բուսցնել: Իսկութեան մէջ, անոր մատները մասնաւոր ոչինչ ունին, բայց ան կ'ընէ ամեն ինչ որ անհրաժեշտ է բոյսերու աճումին համար: Գիտէ զանոնք ճիշդ ատենին եւ բաւարար չափով ջրել ու յաջողապէս խնամել երբ հիւանդ են: Անոնց կը հայթայթ լաւ հող, ջերմութիւն եւ լոյս: Լո՞յս... Այո, որովհետեւ բոյսերը չեն կրնար առանց լոյսի ապրիլ: Ի՞նչ կը պատահի երբ պատուհանն հեռու գտնուին: Իրենց ցօղունը կը թեքի դեպի պատուհանը, իրենց տերեւները կը դառնան դեպի լոյսը, որուն պէտք ունին իրենց սննդանիւթը պատրաստելու համար:

Մեղուները ի՞նչ կ'ընեն ծաղիկներուն մէջ

Մեղուի ու թիթեռնիկի նման միջատներ եւ մեղուահաւի նման թռչուններ կը թառին ծաղիկներու վրայ՝ ծծելու համար անոնց քաղցր նեկտարը: Միեւնոյն ատեն, իրենց հետ կը փոխադրեն բեղմնափոշի (որձաներուն մէջ գտնուող դեղին փոշի մը) ուրիշ ծաղիկներու իգաներուն վրայ: Բեղմնափոշիի հատիկները «կը հանդիպին» ծաղիկին սիրտին վրայ գտնուող իգայի սերմնիկներուն: Տեղի կ'ունենայ բեղմնաւորում, որուն որպէս արդիւնք՝ կը կազմուին մանր հատիկներ:

Կարգ մը բոյսերու պարագային, ինչպէս ցորեն, եգիպտացորեն, կաղնենի եւայլն, հովն է որ կը փոխադրէ բեղմնափոշին:

Ի՞նչ է տարբերութիւնը ցանելու եւ տնկելու միջեւ

Ցանել կը նշանակէ հունտ մը կամ սերմ մը հողին մէջ դնել, որպէսզի արմատ նետէ եւ աճի: Այդ բոյսը կրնայ ըլլալ փոքր կամ ունենալ որոշ մեծութիւն մը:

Յաճախ շատ մեծ թիւով հունտեր կը ցանուին եւ երբ բազմաթիւ ընծիւղներ երեւին, անոնցմէ մաս մը զգուշութեամբ հողէն կը հանեն ու այլ տեղ կը վերատնկեն, որպէսզի բոյսերը խիտ բուսնելով իրարու աճումին արգելք չըլլան:

Մսակեր բոյսեր կա՞ն

Այո՛, այդ բոյսերը կը սնանին միայն կարգ մը միջատներով: Անհաւաստի կը թուի՝ սակայն ճիշդ է մսակեր բոյսերը կը բուսնին այնպիսի տեղեր, ուր դժուարութիւն ունին հողէն իրենց սնունդը ապահովելու: Ուրեմն այլ միջոցով ձեռք կը ձգեն իրենց սնունդը:

Օրինակի համար, ցօղաբոյսին տերեւներուն վրայ կը գտնուի անտեսանելի կաչուն հեղուկ մը: Երբ միջատ մը թառի վրան, կը փակչի տերեւին, որ շուտով անոր վրայ կը կծկուի բանտարկելով զայն: Բոյսը կամաց-կամաց կը մարսէ իր բանտարկեալը, զայն վերածելով սնունդի: